Կա-թու-ղի-կո-սաց	ձըկ-տե-ցու-ցա-նեմ
կա-տա-րե-լա-դոյն	ձի-ար-ձա-կա-րան
կա-մա-ւո-րու-թիւն	ձե-ւա-ցու-ցա-նեմ
կա-նո-նա-ւո-րեմ	ձե-ւա-կեր-պու-թիւն
կա-մա-ւո-րա-կան	Ղամ-բա-րա-նը-շՅԼ
կա-նո-նա-ւո-րել	ղամ-բա-րա-ղար-դեմ
կա-ռու-ցա-նե-լով	ղամ-բա-րա-ղար-դից
կաղ-մա-կեր-պու-թիւն	ղամ-բա-րա-ղար-դիւք
կաղ-մա-րա-րու-թիւն	ղե-կա-վա-րու-թիւն
կայ-ծակ-նա-ձա-ձանչ	ղե-կա-վա-րե-լով
Հա-ղա-րա-պա-տիկ	ղե՛ն-ջա-կա-պա-տեմ
Տա-կա-ձա-ռու-թիւն	ղե՛ն-ջա-կա-պա-տեալ

դու-րա-նա-վա-ճառ	յա-մե-ցու-ցա-նեմ
դօ-դե-ցու-ցա-նեմ	յայ-տա-րա-րու-թիւն
Ճա-խա-րա-կա-ձե	յան-դի-մա-նու-թիւն
ճա-կա-տա-մար-տիլ	յանձ-նա-պաս-տա-նիմ
ճա-հա-դոր-ծու-թիւն	յան-դի-մա-նա-կան
ճա-ճան-չա-տե-սակ	յու-դէգ-նա-ցու-թիւն
ճա-նա-պար-հոր-դեւ	հա-խա-գա-ղա-փար
ճա-շա-կե-ցու-ցի	նա-խա-գու-շա-կեմ
ճար-տա-սա-նու-թիւն	նա-խա-ղա-սու-թիւն
ճար-տա-րա-պե-տեմ	նա-խախ-նա-մու-թիւն
ճրմ-լե-ցու-ցա-նեմ	նա-խա-յա-ւի-տեան
ճո-ռո-մա-բա-նից	նա-հա-պե-տու-թիւն
Մա-հա-պար-տե-լի	նա-հա-տա-կու-թիւն
մա-հա-ցու-ցա-նեւ	նա-ւա-վա-րու-թիւն
ման-րա-մաս-նա-պէս	նա-խախ-նա-մա-կան
ման-րա-մաս-նա-բար	նա-հա-պե-տա-կան
մայ-րա-քա-ղա-քաց	Շա-հա-սի-րու-թիւն
մաս-նա-ւո-րա-պէս	շա-հա-սի-րա-կան
մա-տա-կա-րա-րեմ	շա-ղակ-րա-տու-թիւն
մա-տե-նադ-րու-թիւն	շա-ռա-գու-նե-ցայ
մար-գա-րէ-ու-թիւն	շա-ռա-ւի-դե-ցի
մար-տի-րո-սու-թիւն	շա-տա-խօ-սու-թիւն
Յաղ-թա-հա-րե-ցի	շա-րա-կար-գու-թիւն
յաղ-թա-նա-կե-լով	շա-րու-նա-կա-պէս
յաղ-թա-նա-կու-թիւն	շը-նոր-հա-ւո-րեմ
յա-ճա-խե-ցու-ցիչ	շո-ղո-քոր-թու-թիւն

Ո-խա-կա-լու-թիւն	պայ-ծա-ռա-բա-նեմ
ո-խա-կա-լա-պէս	պան-դո-կա-պե-տաց
ո-ղոր-մա-ծու-թիւն	պաշ-տօ-նա-տա-րաց
ող-ջա-խո-հու-թիւն	պատ-գա-մա-ւո-րաց
ող-ջա-խո-հա-բար	Ջա-հա-զար-դու-թիւն
ող-ջա-ցու-ցա-նեմ	ջա-հա-ցու-ցա-նեմ
ող-ջու-նատ-րու-թիւն	ջա-հա-ւո-րա-կան
ոս-տի-կա-նու-թիւն	ջա-տա-գով-ու-թիւն
ոտ-նա-չա-փու-թիւն	ջե-ռա-ցու-ցա-նեմ
որկ-րա-մո-լու-թիւն	ջեր-մե-ռան-դու-թիւն
Չա-րա-բախ-տու-թիւն	ջերմ-նա-տազ-նա-պել
չա-րա-բա-նա-կան	ջո-կա-մա-նե-ցի
չա-րա-գոր-ծու-թիւն	ջը-րա-հեղ-ձա-կան
չա-րա-խօ-սու-թիւն	ջը-րա-սու-ղե-լոց
չա-փա-ղան-ցու-թիւն	Ռա-հա-ւո-րա-կան
չա-փա-ւո-րա-պէս	ռա-հա-ւո-րու-թիւն
չա-րա-խրա-տու-թիւն	ռամ-կա-բա-րոյ-ից
չա-րա-կա-մու-թիւն	ռամ-կա-բա-րոյ-իւք
չա-րակ-նա-ծու-թիւն	ռամ-կա-բա-րոյ-իւ
չը-քա-ւո-րու-թիւն	ռամ-կա-ցու-ցա-նեւ
Պա-խա-րա-կու-թիւն	ռամ-կա-ցու-ցա-նեմ
պա-կա-սա-մօ-րուս	ռաբ-բուն-ա-պե-տին
պա-ճու-ճա-պա-տանք	ռըմ-բա-ւո-րա-կան
պա-տաս-խա-նա-տու	ռազ-մա-հա-տու-թիւն
պայ-ծա-ռա-զար-դեմ	Սա-բե-լի-ա-նոս
պայ-ա-զա-տու-թիւն	սա-կա-ւա-հա-ւատ

սա-կա-ւա-ցու-ցին	տօ-նա-խ ըմ-բու-թիւն
սա-հե-ցու-ցա-նեմ	րա-բու-նա-կա-նաց
սահ-մա-նադ-րու թիւն	րա-բու-նա-պե-տօք
սա-ղար-թա-պա-ճոյճ	րա-խա-ցու-ցա-նեմ
սաղ-մո-սեր-գու-թիւն	րախ-ճա-նա-գու-նից
սըր-բա-սա-ցու-թիւն	րա-կեր-տա-կա-նաց
սը-րով-բէ-ա-կան	րամ-կա-կա-նա-պէս
սըր-տա-ցու-ցա-նեմ	րե-նա-տե-սա-կան
Վա-հա-նա-ւո-րաց	րո-պէ-ա-ցու-ցալ
վա-ճա-ռա-կա-նաց	րախ-ճա-նա-կա-նաց
վա-ճա-ռա-տե-ղի	րա-կեր-տա-կա-նօք
վայ-եւ-չա-հա-սակ	ճա-ծու-ցա-նե-լով
վա-նա-կա-նու-թիւն	ցա-մա-քա-թը-ռիչ
վար-դա-պե-տու թիւն	ցա-մա-քե-ցու-ցիչ
վար-ժա-պե-տա-կան	ցայ-գա-պաշ-տօ-նի
վար-շա-մա-կա-պատ	ցան-կա-սի-րու-թիւն
վե-րա-ցու-ցա-նօղ	ցա-ւա-գա-րու-թիւն
Տագ-նա-պե-ցու-ցի	ցա-ւե-ցու-ցա-նեմ
տա-ժա-նա-տե-սիլ	ցըր-տա-հա-րե-ցայ
տա-կա-ռա-պե-տաց	ցո-լա-ցու-ցա-նեմ
տա-ղա-չա-փա-կան	ցօ-ղա-տե-սա-կաց
տա-ղա-ւա-րա-հար	Խիւ-ճա-դի-մու-թիւն
տաղտ-կա-ցու-ցա-նեմ	ւիւ-ճա-դի-մա-բար
տա-ճա-րա-շի-նաց	ւիւ-ճա-դի-մօ-րէն
տան-ջա-նա-րա-նօք	ւիւ-ճա-դի-մա-պէս
տա-սա-նոր-դե-ցի	ւիւ-ճա-դի-մա-կան

ւիւ-րա-քան-չիւ-րոց	քա-ղա-քա-վա-րեւ
ւիւ-թա-ւո-րա-կան	քա-ջա-լե-րու-թիւն
ւիւ-թա-կա-նու-թիւն	քա-րո-ղակ-ցու-թիւն
ւիւ-թա-կա-նիւ-թիւց	քա-ղա-քա-վա-րեւմ
ւիւ-թա-կա-նու-թիւն	քաղց-րա-շա-նու-թիւն
Փայ-լակ-նա-տե-սիւ	քա-ռա-կեր-պու-թիւն
փայ-լա-տա-կու-թիւն	քօ-ղա-ղար-դե-լով
փայ-լե-ցու-ցա-նեմ	Օ-ղա-չա-փու-թիւն
փա-ռա-բա-նա-կից	օ-շա-րա-կա-գործ
փա-ռա-բա-նա-րան	օ-տա-րա-ցու-ցիւք
փա-ռա-բա-նու-թիւն	օ-րի-նա-կու-թիւն
փա-ռա-ւո-րա-գոյն	օ-րի-նա-ւո-րաց
փաս-տա-բա-նա-կան	օ-ղա-բա-նու-թիւն
փար-թա-մա-ցու-ցիւք	օգ-տա-կար-ու-թիւն
փափ-կա-սի-րու-թիւն	օգ-նա-կա-նու-թիւն
Քա-Տա-նայ-ա-պետ	օգ-տա-կա-րա-գոյն
քա-Տա-նայ-ու-թիւն	օգ-տե-ցու-ցա-նեմ
քա-ղա-քա-կա-նաց	օ-ձա-Տա-րու-թիւն



Ընթերցուած ութերորդ :

Յետ կործանելոյ՝ մեծ աշտարակին,
անդ խառնակեցաւ՝ լեզու մարդկային,
զխօսս միմեանց՝ ոչ իմանային,
ցիր և ցան եղեալ՝ աստ անդ գնացին :

Մոռացան զԱճ՝ զարարիչ նոցին,
 զտարերս, զկուռս՝ աստուածացուցին,
 այսպիսի իրաց՝ պաշտօն մատուցին,
 զըկեցան իսպառ՝ ՚ի շնորհաց վերին:
 Թէպէտ այս խաւար՝ չար մոլորութեան,
 կայր շրջապատեալ՝ զաշխարհաւ համայն,
 այլ էին ոմանք՝ ՚ի տանէն Նոյեան,
 որք հետեւէին՝ աստուածպաշտութեան:
 ՚Ի միջի սոցա՝ փայլէր աննման,
 իբրև լուսատու՝ աստղ առաւօտեան,
 որդին թարայի՝ արուարն Աբրահամ,
 որ արժանացաւ՝ տէրունեան կոչման:
 Ասէ ցնա տէր՝ եւ յերկրէ քուամէ,
 եւ ՚ի հօր տանէ՝ եւ ՚ի քոյ ազգէ,
 լիցիս դու յազգ մեծ՝ լիցիս և օրհնեալ
 օրհնեսցին ՚ի քեզ՝ որք ՚ի քէն սերեալ:
 Ահա տես զօգուտ՝ աստուածպաշտութեան,
 որով օրհնեցաւ՝ արուարն Աբրահամ,
 զօրհնիչս իւր օրհնէ՝ հզօր Արարիչ
 թշնամեաց նորա՝ լինի անիծիչ:

Աբրահամ առեալ զՍառայ՝ զկին իւր և զազ-
 գատոհմս ըստ հրամանի Տեառն, և եկեալ յեր-
 կիր քանանացոց՝ ՚ի Պաղեստին՝ բնակեցաւ ՚ի
 Սիւքէմ հանդերձ Ղովտաւ՝ եղբօրորդւով
 իւրով: Անտի ապա եկն ՚ի բեթէլ և եհար

զխորան իւր, ուրանօր երևեալ նմա Այ խոս-
տանայ տալ զերկիրն զայն զաւակի նորուն :
Շինեաց անդ սեղան, կարդաց զանուն Այ, և
գնացեալ բնակեցաւ յանապատի :

Ստիպեալ ՚ի խստութենէ սովու՝ գնաց
յեգիպտոս, և վերադարձեալ անտի՝ եկն վերս-
տին ՚ի բեթէլ : Հովիւքն Ղովտայ և Աբրա-
համու մարտնչէին ընդ միմեանս : Ասէ Աբրա-
համ ցՂովտ, մի՛ լիցի կուիւ ՚ի միջի մեր, քանզի
մեք եղբարք եմք, թէ դու յաջ երթիցես՝ ես
յահեակ, և եթէ դու յահեակ՝ ես յաջ : Տէս՝
որպիսի եղանակաւ խօսի այրն Այ, չտայ տեղի
խռովութեան՝ ՚ի կամս նորա լինելով ապաս-
տան : Իսկ Ղովտ տեսեալ զկողմանսն Յորդա-
նանու զի յուռթի էր ամենայն՝ գնաց բնակիլ ՚ի
Սողոմ, որոյ բնակիչքն ապականեալ էին վա-
րուք, ուստի և չար և մեղաւոր էին առաջի Այ
յոյժ յոյժ : Ջկնի մեկնելոյ սոցա ՚ի միմեանց՝ ասէ
Աճ ցԱբրահամ, քեզ տաց զերկիրդ և զաւակի
քում, զորս բազմացուցից իբրև զաւազ երկրիդ :

Գիտեա՛ մանուկ քաղցրիկ՝ զի թէպէս
Ղովտ ՚ի մէջ չարագործ մեղաւորաց բնակէր,
սակայն անսիրութեան լոյսն փայլէր ՚ի միտս նր
ի խաւարի անդ կուապաշտութեան, վասն որոյ
և սիրելի էր Աբրահամու : Յայնմ ժամանակի
չորս թագաւորք այնոցիկ կողմանց ելին ՚ի պա-

տերաղմ ՚ի վերայ հնգից թագաւորաց Սուր-
մայ և այլոց տեղեաց, յաղթահարեալ յաւարի
առին զամենայն, գերեցին և զբնակիչս քաղա-
քացն, ընդ որս էր Ղովտ՝ հանդերձ համայն
ընտանեօք և ստացուածովք իւրովք՝ գերեալ:
Իբրև լուաւ Աբրահամ զգոյժն զայն՝ վաղվա-
ղակի էառ յընդոծնաց իւրոց արս իբրև երեք
հարիւր տասն և ութն, և պնդեցաւ քաջու-
թեամբ զինի յաղթողացն: Մարտ սաստիկ
տուեալ ընդ նոսա՝ զբազումս ՚ի նոցանէ առա-
թուր կործանեաց, և զմնացորդսն արար փախս-
տական: Դարձոյց զամենայն գերիս և զաղլսս
նոցին, ընդ որս և զՂովտ հանդերձ ընտանեօք
և կահիւք նորա, և վերադարձոյց զամենայն
ինչսն առ տեարս իւրեանց՝ չառնլով և ո՛չ զմի
ինչ ՚ի նոցունց վասն իւր, զի մի՛ գուցէ ասիցեն
նոքա թէ մեք մեծացուցաք զԱբրահամ, բայց
տասանորդս էառ յաւարէ անտի վասն Մել-
քիսեդեկի՝ քահանային Այ, որ ՚ի դառնալ
Աբրահամու ՚ի կոտորածէ անտի՝ ել ընդ առաջ
նորա հացիւ և գինեաւ, և օրհնեաց զնա: Աս-
տանօր նկատել արժանէ զգործ Աբրահամու:
Չառնու յանձն ստանալ ինչ յաւարէ անտի, զի
մի՛ բարերարեալքն ասիցեն թէ ընչիւք մերովք
մեծացաւ Աբրահամ, քանզի յուսացեալ էր նա
յԱճ՝ կենդանի հաւատով, յուսայր զի ողորմու-

Թեամբ նորա մեծասցի, և մի ստացուածովք
այլոց, այսու յուսով պարտ է ամենեցուն ուղիղ
պահել զկշիռ արդարութե. մի իւրացուցանել
զինչս օտարաց, որ ինչ պիտոյն է՝ Աճ մատակա-
րարէ զայն՝ կենդանի յուսով յուսացելոց իւրոց:

Սայլորդ և Դիոս:

Ո՛վ ազնիւ մանուկ՝ ՚ի լսել զայս բան,
մի կարծեր թէ մարդ՝ եղիցի անջան,
ոչ է պարտ մարդոյ՝ կալ անգործ ՚ի տան,
այլ քաջ աշխատիլ՝ լինել քրտնաջան:
Զի անգործութիւն՝ է պատճառ մեղաց,
և դուռն բանայ՝ մուլութեանց բազմաց,
յոր դրդեն զքեզ՝ բոյլք չար ընկերաց,
յորոց իբր յօձից՝ պարտիս կալ ՚ի բաց:
Աստանօր կամիմ՝ զառակ մի գրել,
որով քեզ բարի՝ խըրատ աւանդել,
զոր և անկէ քեզ՝ ՚ի մտի պահել,
վաստակօք բարի՝ անուն ժառանգել:
Սայլորդի ուրովք՝ սայլ ՚ի տիղմ խրեալ,
և նա լայր սաստիկ՝ ՚ի գուճս խոնարհեալ,
աղաչէր զդիս՝ յօգնութիւն իւր գալ,
զի ՚ի վտանգէն՝ լիցի ազատեալ:
Սմա կարեկից՝ եղեալ Դիոսի,
ձայնէր, ա՛յ յիմար՝ և ողորմելի.

նախ հար գու զձին՝ գանիւ մտրակի,
 և մղեան յառաջ՝ զանիւ քոյ սայլի:
 Ապա մաղթանօք՝ հայցեան զօգնութիւն,
 և գտցես անշուշտ՝ զյաջողութիւն,
 պիտի՞ ուղտու փուշ՝ ձգեսցէ զիւր վիզ,
 անաշխատ չաճին՝ ցորեան և որիզ:
 Ապա պարտիմք մեք՝ փութաջան լինել,
 վաստակօք ձեռաց՝ առ Աճ դիմել,
 զոր ինչ նա տացէ՝ սիրով ընդունել,
 գոհ լինել յաւէտ՝ և փառս նուիրել:



Բարոյ վեցալանի:

Աշ-խա-տա-սի-րու-թիւն
 ա-ռա-ջա-ւո-րու-թիւն
 աղ-ճա-տա-բա-նու-թիւն
 ան-ժա-մա-նա-կա-բար
 ա-րար-չա-դոր-ծու-թիւն
 Բա-րե-համ-բա-ւու-թիւն
 բազ-մա-ժա-մա-նա-կեայ
 բաղ-կա-ցու-ցա-նո-ղաց
 բըղ-ջա-խո-հա-կա-նաց
 բըռ-նա-ւո-րա-կա-նաց
 Գա-զա-նա-շաղ-ղա-կեր

գայ-թագ-ղե-ցու-ցա-նեմ
 գա-լա-ուա-պե-տու-թիւն
 գա-լա-ղան-եր-գու-թիւն
 գե-ղեց-կա-ցու-ցա-նեմ
 Դա-դա-րե-ցու-ցա-նեմ
 դա-տար-կա-բա-նու-թիւն
 դաս-տի-ա-րա-կու-թիւն
 դը-ղըր-դե-ցու-ցա-նեմ
 դի-պե-ցու-ցա-նո-ղաց
 Եզ-րա-կա-ցու-ցա-նեմ
 ե-կե-ղե-ցա-կա-նաց
 ե-ղա-նա-կա-ւո-րեմ
 ե-րախ-տա-գի-տու-թիւն
 եղ-բայ-րա-սի-րու-թիւն
 Ջազ-րա-ցու-ցա-նո-ղաց
 զար-մա-նա-գոր-ծու-թիւն
 զար-տու-ղե-ցու-ցա-նեմ
 զու-ար-թա-ցու-ցա-նեմ
 զու-ար-ճա-բա-նու-թիւն
 Էմ-մա-նու-է-լա-կան
 է-ա-ցու-ցա-նո-ղաց
 է-րէ-այ-որ-սու-թիւն
 է-ա-կա-տե-սու-թիւն
 է-ու-թե-նա-կա-նօք
 Ընդ-դի-մա-կա-ցու-թիւն
 Ընդ-դի-մա-հա-րու-թիւն

ըն-թեր-ցա-սի-րու-թիւն
 ըն-տա-նե-ցու-ցա-նեմ
 ընտ-րե-լա-խօ-սու-թիւն
 Թա-խան-ձե-ցու-ցա-նեմ
 Թե-թե-լա-մը-տու-թիւն
 Թե-թե-ա-ցու-ցա-նեմ
 Թե-րա-հա-լա-տու-թիւն
 Թու-լա-սըր-տա-կա-նաց
 Ժա-մա-նա-կա-չա-փից
 Ժա-ռան-դա-ւո-րու-թիւն
 Ժա-ռան-դոր-դակ-ցու-թիւն
 Ժո-ղո-վըր-դա-պե-տաց
 Ժա-մա-նե-ցու-ցա-նել
 Խ-մաստ-նա-ցու-ցա-նել
 Ի-մաս-տա-սի-րու-թիւն
 Ինք-նաս-տեղ-ծո-ղու-թիւն
 Ի-րա-լա-բա-նու-թիւն
 Իւ-ղա-բե-րա-կա-նաց
 Լա-րա-խա-ղա-ցու-թիւն
 Լը-սե-ցու-ցա-նո-ղաց
 Լու-սա-ւոր-չա-դա-ւան
 Լու-սա-պայ-ծա-ւու-թիւն
 Լըր-ջա-ցու-ցա-նո-ղաց
 Խան-դա-ղա-տա-կա-նաց
 Խե-լա-մը-տե-ցու-ցի
 Խը-լըր-տե-ցու-ցա-նեմ

Խը-նա-մա-տա-րու-թիւն
 Խոր-հըր-դա-շոր-ծու-թիւն
 Նաղ-րա-բա-նա-կա-նաց
 ծան-րա-ցու-ցա-նո-ղաց
 ծի-ծա-ղա-կա-նու-թիւն
 ծի-րա-նա-վա-ծա-ռաց
 ծո-րե-ցու-ցա-նո-ղաց
 Կա-թու-ղի-կո-սա-րան
 կաղ-կան-ձո-ղա-կա-նաց
 կար-կա-ջա-հո-սու-թիւն
 կա-մա-ւո-րա-կա-նաց
 կա-նո-նա-ւո-րու-թիւն
 Հա-ղա-րա-պե-տու-թիւն
 հաշ-տե-ցո-ղա-կա-նաց
 հա-ւա-տար-մա-ցու-ցի
 հա-սա-րա-կոր-դու-թիւն
 հը-րեշ-տա-կա-պե-տաց
 Չայ-նակ-րա-կա-նու-թիւն
 ձե-ռա-գոր-ծա-րա-նաց
 ձը-մեռ-նա-հա-րու-թիւն
 ձե-ւա-ցու-ցա-նո-ղաց
 ձըգ-տե-ցու-ցա-նո-ղաց
 Ղամ-բա-րա-փայ-լու-թիւն
 ղա-նօ-նա-յա-րու-թիւն
 ղու-ղա-րա-նա-պե-տաց
 ղեն-ջա-կա-գոր-ծու-թիւն

զօ-ղան-ըռ-ղա-կա-նաց
 Ճար-տա-րա-խօ-սու-թիւն
 Ճա-նա-պար-հոր-դու-թիւն
 Ճըշ-գըր-տե-ցու-ցա-նեմ
 Ճըշ-մար-տա-սի-րու-թիւն
 Ճո-ւո-մա-բա-նու-թիւն
 Մա-կե-րև-ու-թա-նամ
 մա-տա-կա-րա-րու-թիւն
 մար-գա-րէ-ա-բար-բառ
 մարմ-նա-ցու-ցա-նե-լով
 մեր-ձա-ւո-րա-կա-նաց
 Յա-գե-ցու-ցա-նե-լով
 յա-մե-ցու-ցա-նո-ղաց
 յա-ուա-ջա-բա-նու-թիւն
 յանձ-նա-պաս-տա-նու-թիւն
 յատ-կա-ցու-ցա-նե-լով
 Նա-խա-գու-շա-կու-թիւն
 նա-խա-սահ-մա-նու-թիւն
 նա-խա-րա-րա-կա-նաց
 նը-կա-րա-կեր-տու-թիւն
 նը-մա-նա-բա-նու-թիւն
 Շա-հա-վա-ճա-ւու-թիւն
 շը-նոր-հա-բաշ-խու-թիւն
 շը-նոր-հա-կա-լու-թիւն
 շի-րի-մա-շի-նու-թիւն
 շո-ղո քոր-դա-կա-նաց

Ռ-գե-ըս-պա-նու-թիւն
 ող-ջա-ցու-ցա-նե-լով
 ո-խա-ցու-ցա-նե-լով
 ո-ղոր-մա-ծա-կա-նաց
 որ-կո-րա-ժե-տու-թիւն
 Չա-րա-խօ-սա-կա-նաց
 չը-ուա-նա-ձը-գու-թիւն
 չո-րե-ք-տա-սա-նե-քին
 չո-րե-ք-տա-սան-ամ-եայ
 չը-ք-նա-ղա-կեր-տու-թիւն
 Պա-կա-սե-ցու-ցա-նեմ
 պայ-ծա-ռա-բա-նու-թիւն
 պա-պան-ձե-ցու-ցա-նեմ
 պատ-կե-րա-ցու-ցու-թիւն
 պար-կե-շ-տա-խօ-սու-թիւն
 Քա-հա-ղար-դե-ցո-ղաց
 ջեր-մե-ռան-դա-կա-նաց
 ջա-տա-գո-վա-կա-նաց
 ջո-կա-մա-նե-ցու-ցի
 ջեր-մա-չա-փո-ղա-կան
 Ռա-հա-ւո-րե-ցու-ցի
 ռամ-կա-ցու-ցա-նո-ղաց
 ռամ-կա-բա-րոյ-ու-թիւն
 ռամ-կա-բա-րոյ-ա-պէս
 ռե-տ-նա-վա-ճա-ռու-թիւն
 Սա-կա-ւա-ցու-ցա-նեմ

սա հ-մա-նա-դ-ը-րու-թիւն

սայ-թա-քե-ցու-ցա-նեմ

սան-դա-րա-մե-տու-թիւն

սի-մո-նա-կա-նու-թիւն

Վայ-եւ-չա-ցու-ցա-նեմ

վա-ճա-ուա-կա-նու-թիւն

վատ-թա-րե-ցու-ցա-նեմ

վրա-տա-հա-ցու-ցա-նեմ

վի-րա-ւո-րե-ցու-ցի

Տազ-նա-պե-ցու-ցա-նեմ

տա-կա-ռա-պե-տու-թիւն

տա-ռա-պե-ցու-ցա-նեմ

տա-րա-կու-սա-կա-նաց

տը-րա-մա-բա-նու-թիւն

Րա-բու-նա-պե-տու-թիւն

րա-խա-ցու-ցա-նե-լով

րախ-ճա-նա-բա-նու-թիւն

րո-պե-ա-ցու-ցա-կան

րա-բու-նա-բա-րա-պէս

Յա-ւա-դա-րա-կա-նաց

ցա-մա-քա-չա-փու-թիւն

ցո-լա-ցու-ցա-նո-ղաց


ցո-փա-ցու-ցա-նե-լով

ցո-ղա-հա-րա-կա-նաց

Իիւ-ծում-նա-սի-րու-թիւն

իւ-ծում-նա-սի-րա-բար

ւիւ-ճա-ղի-մա-տե-սիւ
 ւի-ւան-ղա-կա-նու-թիւն
 Փայ-լե-ցու-ցա-նի-ցեմ
 փա-ռա-բա-նա-րա-նաց
 փա-ռա-ւո-րե-ցու-ցի
 փար-թա-մա-ցու-ցա-նեմ
 փա-խո-նա-կա-բա-նեմ
 Քա-հա-նայ-ա-կա-նաց
 քա-ղա-քա-կա-նու-թիւն
 քա-ղա-քա-վա-րու-թիւն
 քաղց-րա-ցու-ցա-նե-լով
 քա-ռաս-նա-պատ-կու-թիւն
 Օգ-տա-կա-րա-դու-նից
 օժ-տա-բե-րա-կա-նաց
 օ-տա-րա-ցու-ցա-նեւ
 օ-րի-նա-ղան-ցու-թիւն
 օ-գոս-տա-տի-րու-հի
 օ-ձա-բա-րոյ-ու-թիւն :



Ընկերոսք Էնէրորդ :

Հայրն Աբրահամ՝ և կին իւր բարին,
 չունելով զաւակ՝ ծերացեալ էին .
 զԵղիազար ժիր՝ զդամասկացին,
 զընդոծին իւրեանց՝ ժառանգ ընտրեցին :

Ո՛չ հաճեալ ընդ այս՝ արարիչ բարձրեալ,
 խոստացաւ նոցա՝ ինքնին զաւակ տալ.
 զիւր խորհուրդ անյայտ՝ ընդ աղօտ յայտնեալ
 և զթախծութիւն՝ նոցա փարստեալ:

Սառայ լինելով՝ ամուլ և անծին,
 ետ ցԱբրահամ՝ զԱգար զաղախին.
 և յոյս ունէր զի՝ Ագարու որդին,
 լիցի որդեգիր՝ և ժառանգ նոցին:

Երբ ծանեաւ Ագար՝ զի ինքն էր յղի,
 տիկին իւր եղև՝ ինքեան խոտելի.
 ցասուցեալ Սառայ՝ զԱգար չարչարեաց,
 և թշուառ աղջիկն՝ շոյտ փախեալ ՚ի բաց:

Ի՛ յանապատի՝ հրեշտակ երևեալ,
 դարձիր առ տիկինդ՝ աղախնոյն ձայնեալ.
 ընդ ձեռամբ տիկնորդ՝ հընազանդ մնալ,
 և զանցս մանկան՝ նմա ծանուցեալ:

Ագար գոհութիւն՝ մատոյց արարչին,
 և առ տիկին իւր՝ դարձ արար կրկին.
 անդ երկնեալ ծնաւ՝ զԻսմայէլ որդին,
 ընդ որ բերկրեցան՝ իւր տէր և տիկին:

Տէս՝ յորժամ Ագար՝ մեծամտեցաւ,
 յիւրմէ տիկնորէ՝ յոյժ չարչարեցաւ.
 հայրն Աբրահամ՝ ընդ այն հաճեցաւ,
 զի ՚ի հրեշտակէ՝ վերնոյն խրատեցաւ:

Ուստի մանուկ դու՝ ուսիր Տրազանդիլ,
 զչափ վիճակիդ՝ բարւոք ձանաչել.

ի յաջողութեան՝ չմեծամտել,
մի գուցէ վասն այն՝ պատուհաս կրել:

Երևեալ Տ՛ր Աբրահամու՝ ետ նմա ուխտ թլպատութեան, զի այնու զատեսցի ՚ի հեթանոսաց, և օրհնեաց զՍառայ ասելով՝ տաց քեզ զաւակ և թագաւորք ՚ի նմանէ եղիցին: Անկաւ Աբրահամ ՚ի վերայ երեսաց իւրոց և ծիծաղեցաւ, և խօսեցաւ ՚ի սրտի իւրում և ասէ. թէ հարիւրամենի՝ որդի՞ լինիցի. և Սառայ իննըսնամեայ ծնանիցի: Գործ՝ հակառակ բնութեան, և անհաւատալի մարդկային մտածութեան: Մեռեալ էր արգանդ Սառայի. և Աբրահամ ծերացեալ էր յոյժ և ալեորեալ: Բայց անհարինքն առ ՚ի մարդկանէ՝ հարաւորք են յԱյ: Եւ խրախուսեաց Աճ զԱբրահամ ասելով՝ ահա Սառայ կին քո ծնցի քեզ որդի. և հաստատեցից զուխտ իմ ընդ նմա ուխտ յաւիտենական, և ընդ զաւակի ն՛ր յետ նորա: Յիսուս՝ փրկիչն աշխարհի էր յաւիտենական ուխտ Տեառն, զի ՚ի զաւակէ նոցին ունէր ծնանիլ մարդկային բնութեամբ և մարմնանալ ՚ի լրանալ ժամանակին ըստ խոստմանն Այ: Վասն որոյ ասէ. Եւ վասն իամայելի ահա՛ լուայ քեզ, և օրհնեցից զնա, և աճեցուցից զնա և բազմացուցից զնա յոյժ, և երկոտասան ազգ ծնցի, և տաց զնա

յազգ մեծ : Բայց զուխտ իմ հաստատեցից ընդ
Իսահակայ , զոր ծնցի քեզ Սառայ ՚ի ժամա-
նակի յայսմիկ ՚ի միւսում տարւոջ :

Դարձեալ երեցաւ Աճ Աբրահամու առ
կաղնեաւն մամբրէի ՚ի միջօրէի , և ասէ ցնա-
մբէ Սառայ կին քո , նա պատասխանի ետ և
ասէ , ասաւանիկ ՚ի խորանի անդ է : Եւ ասէ ,
դարձեալ եկից առ քեզ ՚ի ժամանակի յայսմիկ
՚ի սոյն աւուրս , և ունիցի որդի Սառայ կին քո ,
և Սառայ ունկն դնէր առ դրան խորանին ,
քանզի յետոյ նորա կայր : Ի լսելն զաւետիս որ-
դեծնութեան և մայրանալոյ՝ ծիծաղեցաւ Սա-
ռայ ընդ միտս և ասէ , որ ինչ ցայժմ ոչ եղև
ինձ , անոր լինիցի , և տէր իմ ծերացեալ է և ես
եմ պառաւեալ :

Եւ Տէր յայց ել Սառայի որպէս և ասաց ,
և արար Տէր Սառայի՝ որպէս և խօսեցաւ : Վա-
տարեցաւ աւետիքն վերնական , ծնաւ Սառայ
Աբրահամու որդի ծերութեան , և հայրն կո-
չեաց զանուն որդւոյ իւրոյ Իսահակ՝ որ թարգ-
մանի ՚ի լեզու Եբրայեցոց ծիծաղ , զի ՚ի լուր
աւետեաց ծննդեան նորա ծիծաղեցան հայր և
մայր նորա՝ մարդկօրէն զբանն անհաւատալի
կարծելով : Եւ ասէ Սառայ , ծաղր արար զիս
Աճ , զի որ և լսիցէ՝ ուրախ լինիցի ընդիս : Եւ
աճեաց մանուկն , և հասուցաւ ՚ի ստենէ , և

արար Աբրահամ ուրախութիւն մեծ յաւուր՝
 յորում հասուցաւ ՚ի ստենէ Իսահակ որդի իւր :
 Այլ դու՛ մանուկդ հայ՝ ընթերցցիս զլիակատար
 պատմութի Իսահակայ՝ ՚ի հասունանալ մտացդ,
 ՚ի սուրբ Աճաշունչ գիրս :

Գովեստ ՚ի Սաղմոսն :

Աճաշունչ գիրք՝ մանուկ քրտնաջան ,
 քան զգիրս համայն՝ են յոյժ պատուական ,
 երբ աւարտեսցես՝ դու զայբբենարան ,
 յայնժամ ընթերցցիս՝ զՍաղմոս Դաւթեան :
 Դաւիթ էր երբեմն՝ այր ոք խաշնարած ,
 այլ բարի գործովք՝ վսեմ գերապանծ .
 հեռի եղև սա՛ յարանց այլազգեաց ,
 և զանթլպատից՝ զդիս նզովեաց :
 Զսա մեծ Աճ՝ թագաւոր ընտրեաց ,
 որ զԻսրայէլեան՝ զազգ կառավարեաց .
 ազդեալ և շարժեալ՝ ՚ի վերին շնորհաց ,
 զգիրս Սաղմոսաց՝ գրեաց շարադրեաց :
 Սաղմոսն է իբրև՝ անզոյգ մանանայ ,
 որով ընթերցողն՝ յագեալ ճոխանայ .
 թէ դիմես առ նա՛ առատ շնորհս տայ ,
 թէ սիրես զնա՛ միտք քոյ զօրանայ :
 Թէ ունիս զցաւս՝ սա բժշկանայ ,
 ցաւք քոյ բժշկին՝ միտք քոյ ողջանայ :

Թէ ես ծարաւի՝ սա աղբիւրանայ ,
 յայս աղբիւր վերին՝ դու միշտ յաճախեան :
 Թէ ես անճրագ՝ սա քեզ լուսանայ ,
 լոյս սուրա ՚ի քեզ՝ այլ ոչ մթանայ .
 Թէ ես մոլորեալ՝ սա քեզ ռահանայ ,
 և զքեզ յերկինս՝ տարեալ համբառնայ :



Բարոյ Էօթնաշնչի :

Աշ-տա-րա-կա-շի-նու-թիւն
 ա-ռաս-պե-լա-բա-նու-թիւն
 ա-լան-դա-պահ-պա-նու-թիւն
 Բա-լա-կա-նա-ցու-ցա-նեմ
 բը-նա-կե-ցու-ցա-նի-ցեմ
 բը-նա-ւո-րա-կա-նու-թիւն
 Գա-լա-ռա-պե-տա-կա-նաց
 գե-ղեց-կա-ցու-ցա-նե-լով
 գըն-տա-կա-խա-ղար-կու-թիւն
 Դըժ-պար-տե-ցու-ցա-նո-ղաց
 դըժ-ուա-րա-ցու-ցա-նե-լով
 դը-ժո-խա-հա-լա-տա-լի
 Ե-պիս-կո-պո-սա-պե-տաց
 երկ-բայ-ա-ցու-ցա-նո-ղաց
 ե-ռան-կիւ-նա-չա-փու-թիւն
 Զար-հու-րե-ցու-ցա-նո-ղաց

զու-գա-հա-ւա-սա-րա-պէս
 զու-գա-հե-ռա-կա-նու-թիւն
 Էջ-այ-ծեմ-նա-պա-նու-թիւն
 Է-ա-կա-ցու-ցա-նե-լով
 Ըն-դար-ձա-կե-ցու-ցա-նեմ
 Ըն-դար-ձա-կա-մը-տու-թիւն
 Ըն-կըղ-մե-ցու-ցա-նե-լով
 Թա-ռա-մե-ցու-ցա-նե-լով
 Թը-ռա-կա-նա-դը-րու-թիւն
 Թըն-դա-նօ-թա-կեր-տու-թիւն
 Ժա-մա-նա-կա-գը-րու-թիւն
 Ժան-տա-ցու-ցա-նո-ղա-կան
 Ժո-ղո-վըր-դա-պե-տու-թիւն
 Ի-մաստ-նա-ցու-ցա-նո-ղաց
 Ի-րա-ւա-ցու-ցա-նո-ղաց
 Ի-րա-ւա-գոր-ծո-ղու-թիւն
 Լայ-նա-ցու-ցա-նո-ղա-կան
 Լա-րա-խա-ղա-ցո-ղա-կան
 Լու-սա-գա-րա-կա-նու-թիւն
 Խե-լա-մը-տե-ցու-ցա-նեմ
 Խե-նե-շա-ցու-ցա-նե-լով
 Խու-ժա-դու-ժա-կա-նու-թիւն
 Ծան-րա-ցու-ցա-նո-ղա-կան
 Ծի-ա-ծա-նա-ծա-ւա-լեալ
 Ծի-ծա-ղե-ցու-ցա-նե-լով
 Կազ-դու-րե-ցու-ցա-նո-ղաց

ԿԵՆ-ՂԱ-ՆԱ-ԳՈՒ-ԳԱ-ՆԵ-ԼՈՎ
 ԿՐ-ՐԱ-ԼՈ-ՐԱ-ԿԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ՀԱ-ԿԱ-ՈՒ-ԿԱ-ՔԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ՏԱ-ՄԱ-ՍԿԱ-ՍԱՍ-ԽԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ՏԱ-ՄԱ-ՈՕ-ՍԱ-ՔԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ՉԱՆՃ-ՐԱ-ԳՈՒ-ԳԱ-ՆՈ-ՂՈՒ-ԹԻԼՆ
 ՃԵՈ-ՆԱՍ-ՍԵՂ-ԾԱ-ԿԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ՃԻ-Ա-ԼՈ-ՐԱ-ԿԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ՂԱՄ-ՔԱ-ՐԱ-ՂԱՐ-ՂԱ-ԿԱ-ՆԱԳ
 ՂԱՄ-ՔԱ-ՐԱ-ՓԱՅ-ԼՈ-ՂՈՒ-ԹԻԼՆ
 ՂՕ-ՂԵ-ԳՈՒ-ԳԱ-ՆՈ-ՂԱ-ԿԱՆ
 ՃԱ-ԽԱ-ՐԱ-ՐԱ-ԿԱ-ՂՈՐ-ԾՈՒ-ԹԻԼՆ
 ՃԱ-ՆԱ-ՍԿԱՐ-ՏՈՐ-ՂԱԿ-ԳՈՒ-ԹԻԼՆ
 ՃԱ-ՆԱ-ՍԿԱՐ-ՏՈՐ-ՂԱԿ-ԳԵ-ԼՈՎ
 ՄԱ-ԿԱՐ-ՂԱ-ԿԱ-ՀԱ-ՓՈՒ-ԹԻԼՆ
 ՄԱ-ՍԱ-ԿԱ-ՐԱ-ՐԱ-ՍԵ-ՍԱԳ
 ՄԱՅ-ՐԱՍ-ՔԱ-ՂԱ-ՔԱ-ԿԱ-ՆԱԳ
 ՅՈՐ-ՂՈ-ՐԵ-ԳՈՒ-ԳԱ-ՆՈ-ՂԱԳ
 ԵԱ-ԼԻ-ՍԵ-ՆԱ-ԿԱ-ՆՈՒ-ԹԻԼՆ
 ԵՕ-ԺԱ-ՐԵ-ԳՈՒ-ԳԱ-ՆԵ-ԼՈՎ
 ՆԱ-ԽԱ-ՍԱՐ-ԿԱ-ԼԱ-ՂՈՒ-ԹԻԼՆ
 ՆԵՐ-ՂԱՉ-ՆԱ-ԿԱ-ԼՈ-ՐՈՒ-ԹԻԼՆ
 ՆՐ-ԿՐՐ-ՍԵ-ԳՈՒ-ԳԱ-ՆԵ-ԼՈՎ
 ՇԱ-ՔԱ-ԹԱ-ԳՈՒ-ԳԱ-ՆԵ-ԼՈՎ
 ՉԵ-ՂԵ-ԳՈՒ-ԳԱ-ՆՈ-ՂՈՒ-ԹԻԼՆ
 ՉՐ-ՆՈՐ-ՏԱ-ՎԱ-ՃԱ-ՈՒՈՒ-ԹԻԼՆ

ՈՂ-Զա-խո-Տա-կա-նու-թիւն
 ող-Զա-մը-տա-ւո-րա-կան
 ու-նայ-նա-ցու-ցա-նե-լով
 Չո-րե-ք-տա-սա-նե-րոր-դաց
 չո-րոր-դա-պե-տա-կա-նաց
 չէ-զո-քա-կա-նա-Տա-ղորդ
 Պա-պան-ձե-ցու-ցա-նո-ղաց
 պա-տաս-խա-նա-տը-ւո-ղաց
 պատ-ուի-րա-նա-պա-Տու-թիւն
 Զա-Տա-ւո-րա-կա-նու-թիւն
 Զե-ւա-ցու-ցա-նո-ղա-կան
 Զեր-մե-ւան-դա-կա-նա-պէս
 Ռազ-մա-սի-րա-կա-նու-թիւն
 ռամ-կա-բա-րոյ-ա-կա-նաց
 ռամ-կա-բա-րոյ-ա-սի-րաց
 Սան-դա-րա-մե-տա-կա-նաց
 սա-կա-ւա-ժա-մա-նա-կեայ
 սոս-կա-ցու-ցա-նո-ղա-կան
 Վայ-եւ-չա-ցու-ցա-նո-ղաց
 վատ-թա-րա-ցու-ցա-նո-ղաց
 վայ-րա-պա-րա-խօ-սու-թիւն
 Տազ-նա-պե-ցու-ցա-նո-ղաց
 տա-ւա-պե-ցու-ցա-նե-լով
 տի-ե-զե-րա-զը-րու-թիւն
 Րա-բու-նա-պե-տա-կա-նաց
 րո-պէ-ա-Տա-մա-րա-պետ

Տա-մա-քա-չա-փո-ղու-թիւն
 ցա-մա-քե-ցու-ցա-նո-ղաց
 ցա-ւե-ցու-ցա-նո-ղա-կան
 Իիւ-ան-դա-ցու-ցա-նո-ղաց
 ւիւ-թ ա-կա-նա-բա-նու-թիւն
 Փայ-լա-տա-կե-ցու-ցա-նեմ
 փե-սայ-ա-ցու-ցա-նե-լով
 Քա-հա-նայ-ա-գոր-ծու-թիւն
 քա-հա-նայ-ա-գոր-ծա-կան
 Օգ-տա-պատ-ճա-ռա-ւո-րաց
 օ-րի-նա-ւո-րա-գու-նից



Ընթերցուած աստեղծութիւնք :

Մայր ճճ :

Երբ ծնայ յաշխարհ՝ ո՞ր զիս գիեցոյց ,
 երբ մերկ երեխայ՝ ո՞ր զիս զգեցոյց ,
 և երբ անլեզու՝ ո՞ր խօսիլ ուսոյց ,

Մայր իմ :

Երբ ՚ի խանձարուրս՝ տղայ գիեցիկ ,
 ո՞ր զօրօրոցի՝ երգեաց՝ զերգ քաղցրիկ ,
 և ո՞ր մեղմ ասաց՝ լուռ ննջեա՝ մանկիկ ,

Մայր իմ :

Երբ հիւանդացայ՝ ո՞ր ետ ինձ զգեղ,
 և զայն դեղ մեղերք՝ ո՞ր արար համեղ,
 և զթոյլ ոտս իմ՝ ո՞ր արար ուժեղ,

Մայր իմ:

Երբ խակ երեխայ՝ գրոց անընտել,
 ո՞ր ուսոյց զիմ միտս՝ զԱճ ճանաչել,
 և զանձառ անուն՝ իւր փառաւորել,

Մայր իմ:

Զիմ պանդխտութիւն՝ յաստիս ո՞ր եցոյց,
 զապականութիւն՝ մարմնոյս ո՞ր ուսոյց,
 և զանմահութիւն՝ հոգւոյս ո՞ր ծանոյց,

Մայր իմ:

Ապա պարտ է ինձ՝ զքեզ միշտ սիրել,
 ՚ի քում ծերութեան՝ քեզ քանջ ծառայել,
 և զԱճային՝ պատգամս կատարել,

Մայր իմ:

Մանուկդ քաղցրիկ՝ որովհետեւ միտք քոյ
 այժմ չէ բաւական ընթերցման սուրբ գրոց՝
 տաց քեզ զհամառօտ ինչ պատմութիւն Իսա-
 հակայ: Յորժամ զաւակն աւետեաց եղև քսան-
 և վեցամեայ՝ կամեցաւ Աճ փորձել զհաւատս
 Աբրահամու և զհնազանդութիւն Իսահակայ:
 Վասն որոյ և հրամայէ նմա տանիլ զորդի իւր ՚ի
 լեառն ինչ բարձր, և անդ պատարագել զնա

Այ: Մինչ ելանէին նոքա ՚ի լեառն, Իսահակ
ինքնին բարձեալ զփայտն՝ ասէ. ասան փայտ
յուս իմ, սուր և հուր ՚ի ձեռին քում, ո՞ւր է
ոչխար յողջակէզ: Եւ նա ասէ. Ա՞՞ տեսցէ իւր
ոչխար յողջակէզ՝ որդեակ: Իբրև եկին ՚ի տե-
ղին՝ զոր ցուցեալ էր Ա՞՞ Իսահակ զգաց զի վե-
րին հրամանաւ ինքեան պարտ էր լինել յողջա-
կէզ. կապեցաւ յօժարութեամբ սրտի, և պատ-
րաստեցաւ ՚ի պատարագ Այ: Իբրև էառ Աբ-
րահամ զսուրն ՚ի ձեռն առ ՚ի զոհել զսիրելի
զորդի իւր միամօր, արգել զնա հրեշտակ Տ՛ն
ասելով՝ մի միտեր զձեռն քո ՚ի պատանեակդ,
և մի ինչ առնել դմա: Երևի ծերունւոյն խոյ
մի կախեալ զծառոյն սաբեկայ զեղջերաց, զոր
և առեալ պատարագեաց փոխանակ որդւոյ
իւրոյ Իսահակայ:

Այսու օրինակաւ եցոյց Ա՞՞ զխորհուրդ
խաչելութեան որդւոյ իւրոյ միածնի, որ ՚ի
սահմանեալ ժամանակին ունէր ՚ի խաչ ելանել
պատարագաւ կենարար և անմահարար մարմնոյ
և արեան իւրոյ ՚ի թողութիւն մեղաց ազգի
մարդկան և ՚ի փրկութիւն հոգւոց հաւատա-
ցելոց: Հաճութեամբն Աբրահամու՝ հայրն
Ա՞՞ զհաճութիւն իւր եցոյց, և հրազանդութեան
Իսահակայ՝ զհնազանդութիւն ծոցածին որդւոյ
իւրոյ բացածանոյց: Ծառն սաբեկայ էր օրինակ

կենսատու սուրբ խաչին • խոյն էր անմեղ գառն
Այ՛ փրկիչ մեր Յիսուս • որ կախեցաւ զխաչէն՝
Տեղով զարիւն իւր սուրբ յազատութիւն ազգի
մարդկան : Ո՞վ անպատու՞ խորութեան խոր-
հրդոցն Այ • ո՞ր կարէ քննել զմիտս ամենակա-
լին : Եթէ ծովավարք չափել և քննել կարեն
զխորութիւն ծովու , և մեք իմանալ կարեմք
զանձառ խորհուրդ մարդեղութե՛ք բանին Այ :
Ապա պարտ է մեզ խորին ջերմեռանդութեամբ
զանձաս մեծութի՛ն փառաց նորա փառաւորել :

Այլ և ծանկիր դու՛ մանուկդ հայ , զի
Աճաշունչ գիրքն լի՛ են հրաշալի պատմութեք ,
յորոց ծայրիւ մատին միայն տաց քեզ այժմ
ճաշակել , իբրև անխօս մանկան՝ զկաթն , մինչև
բաւական լիցիս ճաշակման կերակրոյ յանմահ-
արար սեղանոյ անտի :

Իսահակայ եղեն երկու որդիք՝ Եսաւ և
Յակովբ • առաջինն չար և որկրամուլ , իսկ երկ-
րորդն՝ բարի և ողջախոհ և ժուժկալ : Յակովբ
ծնաւ զերկոտասան նահապետսն • որք նախան-
ձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին զնա յե-
գիպտոս • բայց Աճ էր ընդ նմա յերկրին օտա-
րութեան : Եւ փրկեաց զնա յամենայն նեղու-
թեանց նորա • և ետ նմա շնորհս և իմաստուի
առաջի Փարաւոփնի՛ արքային Եգիպտացոց •
և կացոյց զնա իշխան Եգիպտացոցն՝ և ամե .

նայն տան նորա : Եւ եկն սով յամենայն երկիրն Եգիպտոսի, և ՚ի քանան նեղութիւն մեծ : Եւ եղբարքն Յովսեփայ եկին յԵգիպտոս գնել զցորեան : Եւ յերկրորդումն ետ ծանօթ Յովսեփ եղբարց իւրոց, և յայտնի եղև ազգն նորա Փարաւոփի : Ո՞վ զարմանալի անյիշաչարունն Յովսեփու, որ օրինակ էր անպատում անոխակալութեանն Յիսուսի : Այնքան սրտառուչ է պատմութի Յովսեփայ, մինչ անհար լինել ընթերցողաց ընթեռնուլ զայն և ո՞չ արտասուել :

Զայս ամենայն և զայլ բազում հրաշալի պատմութիւնս թագաւորաց և մարգարէից ունիս ընթեռնուլ յԱճաշունչ մատեանս, որ քան զայլ ամենայն գիրս է պատուականագոյն, և առ որով ամենայն ճոխութիւնք և թագաւորութիւնք աշխարհի են խոտան և ընկեցիկ քանզի սոքա անցանեն և կորնչին, այլ բանն Այ կացցէ և մնացցէ յաւիտեան :

Բարոյ արեւմտեան :

Ա-մե-նա-փա-ռա-ւո-րու-թիւն
 Բա-րե-բա-րոյ-ա-կա-նու-թիւն
 Գի-շե-րա-հա-ւա-սա-րա-գիծ
 Դաս-տի-ա-րա-կա-պե-տու-թիւն
 Ե-րաշ-խա-ւո-րա-կա-նու-թիւն

Զար-հու-րե-ցու-ցա-նո-ղա-կան
 Կ-ա-կա-ցու-ցա-նո-ղա-կան
 Ըն-դար-ձա-կե-ցու-ցա-նո-ղա-կան
 Թե-րա-կա-տար-ա-գը-րու-թիւն
 Ժա-մա-նա-կա-չա-փո-ղա-կան
 Ի-մաս-տա-սի-րա-կա-նու-թիւն
 Լա-տի-նա-բա-նա-կա-նու-թիւն
 Խե-լա-ցը-նո-րա-կա-նու-թիւն
 Ծի-րա-նա-վա-ճա-ռա-շա-հից
 Կը-րա-ւո-րա-կա-նա-հա-ղորդ
 Հը-րո-վար-տա-կա-գը-րու-թիւն
 Զի-թա-վա-ճա-ռա-շա-հու-թիւն
 Ղամ-բա-րա-զար-դա-կեր-տա-կան
 Ճա-խա-րա-կա-գոր-ծո-ղա-կան
 Մա-տա-կա-րա-րա-պե-տու-թիւն
 Յոր-դո-րե-ցու-ցա-նո-ղա-կան
 Նա-խա-սահ-մա-նա-դը-րու-թիւն
 Շը-նոր-հա-վա-ճա-ռա-սի-րաց
 Ութ-աս-տի-ճա-նա-ւո-րու-թիւն
 Չա-րա-բա-րոյ-ա-կա-նու-թիւն
 Պա-պան-ձե-ցու-ցա-նո-ղա-կան
 Զեր-մե-ռան-դա-յոր-դոր-ա-սէր
 Ռամ-կա-բա-րոյ-ա-մեր-ժու-թիւն
 Սան-դա-րա-մե-տա-մեր-ժու-թիւն
 Վայ-եւ-չա-ցու-ցա-նո-ղա-կան
 Տաղ-նա-պե-ցու-ցա-նո-ղա-կան

Բո-պէ-ա-հա-մա-րո-ղա-կան
 Տա-մա-քե-ցու-ցա-նո-ղա-կան
 Իիւ-ծե-ցու-ցա-նո-ղա-կա-նաց
 Փայ-լա-տա-կե-ցու-ցա-նո-ղաց
 Քը-րիս-տո-նէ-ա-ցու-ցա-նել

Գողթոս յԱճաշուհէ գերան :

Զի՞նչ գերմարդկային՝ հողեշահ մատեան ,
 ետ զկեսնս նոցա՝ որք ՚ի նա մատեան ,
 և յօրէնս նորա՝ լինին ապաստան՝

Աստուածաշունչ :

Ի՞նչ բանք օրինաց՝ Տէ՛ն ՚ի յայտ բերան ,
 ի՞նչ քաղցրանան մեր՝ հողի և բերան .
 և զի՞նչ սոյ հանուրց՝ զկեանս փրկութե՛ն՝

Աստուածաշունչ :

Յի՞նչ գիրս ունիմք մեք՝ զմուտ անարգել ,
 զոր հաւատացեալք՝ պարտին միշտ յարգել .
 զոր չարք ժպրհին՝ միայն անարգել՝

Աստուածաշունչ :

Զի՞նչպիսի մատեան՝ չարափառք ատեան ,
 որով անկանին՝ յԱստուծոյ ատեան ,
 յերկնուստ ընկալեալ՝ զանձանց դատաստան՝

Աստուածաշունչ :

Յորժամ մեզ աշխարհ՝ մարմին, սատանայ,
 նիւթեն զչարիս՝ զկորուստ, զմահ,
 զի՞նչ անգէն հոգւոց՝ մեր վահանանայ՝

Աստուածաշունչ:

Եւ ՚ի նաւել մեր՝ յայս կենցաղ անհետ,
 ո՞ր մեզ դէպ յերկինս՝ լինի կարապետ,
 և զի՞նչ ՚ի ծովուն՝ պաշար փրկաւետ՝

Աստուածաշունչ:

ԳՐԱԶԱՄԱՐ:

ՊԻՒԹԱԳՈՐԵԱՆ

ԱՂԻՒՍԵԱԿ:

ա,	1	4,	60													
բ,	2	հ,	70	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	16
գ,	3	ձ,	80	2	4	6	8	10	12	14	16	18	20	22	24	32
դ,	4	ղ,	90	3	6	9	12	15	18	21	24	27	30	33	36	48
ե,	5	չ,	100	4	8	12	16	20	24	28	32	36	40	44	48	64
զ,	6	ժ,	200	5	10	15	20	25	30	35	40	45	50	55	60	80
է,	7	յ,	300	6	12	18	24	30	36	42	48	54	60	66	72	96
ը,	8	ն,	400	7	14	21	28	35	42	49	56	63	70	77	84	112
թ,	9	շ,	500	8	16	24	32	40	48	56	64	72	80	88	96	128
ժ,	10	ո,	600	9	18	27	36	45	54	63	72	81	90	99	108	144
ի,	20	չ,	700	10	20	30	40	50	60	70	80	90	100	110	120	160
լ,	39	ս,	800	11	22	33	44	55	66	77	88	99	110	121	132	176
խ,	40	ղ,	900	12	24	36	48	60	72	84	96	108	120	132	144	192
ծ,	50	ռ,	1000	16	32	48	64	80	96	112	128	144	160	176	192	256



ՆՐՏՆԻՆԱԶԴ ԵՐԿՐՈՐԴ

Թագաւորեաց ՚ի վերայ հայոց յամի ՏՆ 129 :
 Էր սա այր չար և մոլի, և մինչ գնայր յորս վա-
 րազուց, ցնորեցաւ ՚ի խելս իւր, և երիվարաւն
 անկեալ ՚ի խորխորատ մեծ՝ եղև աներևոյթ :

Զրուցին զսմանէ պառաւունք՝ ասէ Խորե-
 նացին, եթէ արգելեալ կայ յայրի միում՝ կա-
 պեալ երկաթի շղթայիւք, և երկու շունք հա-
 նապազ կրծելով զշղթայսն՝ ջանայ ելանել և
 առնել վախճան ՚ի. այլ ՚ի ձայնէ կռանարկու-
 թեան դարբնաց զօրանան՝ ասեն՝ կապանքն :



ՏԻՐԱՆ ԵՐԿՐՈՐԻ

Թագաւորեաց ՚ի վերայ Տայոց յամի Տ՛՛ 353 :
 Ժամանակակից եղև սմա պիղծն Յուլիանոս ու-
 րացող՝ արքայ Յունաց , որ ուրացաւ զԱստուած
 և պաշտեաց զԿուռս : Զիջեալ Տիրանայ ՚ի կամս
 ամբարշտին՝ յանձն առնու զդիւական պատկեր
 նորա կանգնել յիւրում արքունական եկեղեց-
 ւոջ : Ըստ գրեւոյ Խորենացւոյն , սուրբն Յու-
 սիկ ո՛չ հանդուրժեալ ամբարիշտ հրամանին՝
 յափշտակեալ եհան զպատկերն ՚ի ձեռաց ար-
 քայի , և ընկեցեալ յերկիր , կոխեալ մանրեաց :



VICTORIA

ՎԻԿՏՈՐԻՍ

Է օգոստոսափառ և բարերջանիկ Թագուհի մեծին Բրիտանիոյ և տիրող աշխարհին Հնդկաց:

Ծնաւ սա ՚ի 24 Մայիսի յամի 1819, և է միամօր դուստր Եդուարդայ՝ դքսին Վենտայ՝ որդւոյ երջանիկ արքային՝ Գէորգեայ երրորդի: Սկիզբն եղև Թագաւորութե սորա յամի 1837:

Մեզ պարտ է լինել երախաագէտ առ երջանիկն Վիկտորիա, զի եմք ընդ խնամակալ պաշտպանութեամբ նորա: Վեցցէ ուրեմն յերկար դշտոյն մեր օգոստոսափառ: Վեցցէ հզօր ձեռամբ և բարձր բաղկաւ յամս յամայրս: Վեցցէ Վիկտորիա երջանկութեամբ, և հաստատուն մնացէ տէրութիւն նորին:



ՄԵԾԱԳՈՅՆ ԴՐԱԻՏԱՀԱԻ

Անուանեաց զայս գեղեցիկ թռչուն բնախօսն
 Լիննէոս : Իսկ Սկալիջէր , Պիւֆֆոն և այլք կո-
 չեցին զնա սպորտ կամ անոտն՝ կարծելով թէ
 չունի զոտս , այլ չէ՛ այսպէս , քանզի հաւորսքն

Հատանեն զոտս նորա : Զայս թռչուն զառա-
 քինն եբեր յԵւրոպիա Անտոն Փիզափեթա՝
 գտեալ զայն ՚ի նեղուցսն Մակեդանայ յամի
 1522 : Դրախտաճաւուց բազում են տեսակք •
 յորոց զմիւսն ցուցանէ պատկերդ Հետագայ :



ԹՄԳՍԻՈՐ ԴՐԱԻՏԱՀԱԻ

Է անուն չքնաղ և սիրուն թռչնոյս այսորիկ ,
 որ մեծ է իբրև զծիծառն , և փետուրքն փա-
 փուկ և փայլուն : Եթէ այսքան գեղեցիկ են
 թռչունք դրախտին , ուրեմն որքան առաւել
 գեղեցիկ էր նոյն իսկ դրախտն՝ զոր նախկին
 ծնողք մեր կորուսին : Եւ որքան առաւել գե-

դեցկագոյն և փառաւոր՝ դրախտի և դրախտա-
հաւուց Արարիչն, յորմէ մեղքն զնս հեռացոյց:



ՀՈՂԱՄԱՆ


Է թռչունն ինչ շատակեր և թմբրեալ, որոյ
ծանրութիւնն է հինգ կամ վեց լիտր: Անայ
սա ՚ի ծովու, ՚ի գետս և ՚ի ջրաւէտ տեղիս:
Բարդում անգամ ելեալ ՚ի ջրոյ՝ նստի յարևու,

և ջերմացեալ թաւալի ՚ի վերայ երկրի . և
 զհողն վեր ՚ի վայր շրջէ . և իբր թէ մաղէ ,
 յորմէ և կոչեցաւ ՚ի մեզ հողամաղ : Որսայ ըզ-
 ձկունս և անյագ ուտէ : Յաշխարհին Սինէաց-
 ւոց ոչ միայն զհողամաղն ընտելացուցանեն , այլ
 և արձակեն զնա յորս ձկանց՝ արկանելով զօղ ինչ
 ՚ի ստորին մասն պարանոցի նորա , զի մի կլանի-
 ցէ զորսն : Եւ այսպէս զկնի սակաւուց կնրթ
 եղեալ՝ հանեն զօղն ՚ի պարանոցէն . և նա կա-
 լեալ զձուկն՝ բերէ և տայ տեառն իւրում :




ԱՅԾԵԱՄՆ

Է կենդանի ինչ երազ ընթաց և հլու . և նման
 է այծից բաց յեղջերացն՝ որք են բազմաճիւղ :
 Թշնամի է սա օձից՝ զորս կալեալ ոտիւքն սպա-
 նանէ : Վնասակար է սա տերևոց թփոց և ծա-
 ուոց , որ է հասարակ կերակուր այծեմանց : Էզ
 սորա կոչի եղն , որ չունի զեղջիւրս :



ԱՌԻԻԾՆ

Է կենդանի ինչ փառաշուք և ահագնատեսիլ,
 և համարի թագաւոր չորքոտանեաց: Ունի սա
 ՚ի պարանոցին զբաշ թաւահեր և երկայն,
 այլ ոչ էգն: Ձեռ սորա է դիւրաթեք և զօ-
 րաւոր յոյժ, ճիրանքն՝ ուժեղ, ձայնն՝ ահաւոր
 և սոսկալի: Է սա բարուք վեհանձն և մեծա-
 սիրտ, ո՛չ վնասէ մանկանց և ո՛չ կանանց, ճա-
 նաչէ և զերախտիս բարերարին իւրոյ: Այս
 գազան յաղթող է ամենեցուն, և ո՛չ յումեքէ
 երկնչի, բայց միայն յօձից և ՚ի հրոյ՝ յորոց
 փախչի երկիւղիւ: Ասի թէ խափշիկք ՚ի կող-
 մանս Ափրիկոյ դիւրաւ ըմբռնեն զառիւծունս,
 որք ընտելացեալ մոռանան զգազանութիւն
 իւրեանց և ծառայեն տեարցն ՚ի տեղի շանց:
 Ո՞վ աստուածատուր հանձարոյ մարդոյ՝ որ զա-
 մեհի գազանս նուաճեալ ածէ ՚ի հրազանդուի:




ՈՒՂՏՆ

Հասարակապէս բարձր է իբրև վեց ոտնաչափ, և է կենդանի ինչ հլու՝ բայց ոխակալ յոյժ : Թէ և տգեղ է սա կերպարանօք և ունի զուռոյցս ՚ի թիկունս՝ բայց յոյժ պիտանի է մարդկան : Բառնայ սա զբեռինս ծանունս, և տոկայ տօթոյ և ծարաւոյ զաւուրս յորովս : Բնութիւնն էտ ծնգաց սորա զօրութիւն մեծ : Մարդիկ նշանացի ձայնիւ նստուցանեն զնա ՚ի գուճս և կանգնեն ըստ հաճոյից : Վաթն սորա է մաքրիչ արեան, զմիս սորա ուտեն ազգք ոմանք, մորթ և ստե նորա պիտանի են ՚ի զգեստ մարդոյ : Մեծն Վուվիէր ասէ թէ՛ ուղտն ՚ի հեռուստ առնու զհօտ ջրոյ, զոր արբեալ ցյազ պահէ ՚ի ներքին պարկս իւր : Զի երբ սատակին ուղտք ՚ի տօթոյ, Արաբացիք պատառեալ զպարկան՝ ըմպեն զջուրն ՚ի տեղիս անջրոյիս :




ԿՅՊԻԿՆ

Ի մէջ ամենայն անբան կենդանեաց առաւել
 նման է մարդոյ, վասն որոյ, և կոչեցաւ կենդա-
 նի մարդակերպ: Բնութեամբ է սա ճարտար,
 խորամանկ և յաջողակ առ պէսպէս գործս:
 Բազում են տեսակք կապկաց, որոց քաջ ծա-
 նօթասցիս այսուհետև: Զոմանս ՚ի սոցանէ
 կալեալ մարդիկ՝ ընտելացուցանեն և ուսուցա-
 նեն առնել զպէսպէս շարժուածս ծիծաղականս
 ՚ի զուարճութիւն տեսողաց: Ոմանք ՚ի կապկաց
 են անձետ, կէսքն ունին զձետս կարճս, և այլոց
 ձետքն են երկայն յոյժ, որպէս է տեսանել ՚ի
 վերոյին պատկերի: Ձետ սորա է դիւրաթեք
 և պիտանի նմա յոյժ, զոր փաթութեալ զոս-
 տովք ծառոց՝ դիւրաւ ոստնու աստ և անդ, և
 գողացեալ զպտուղս ուտէ աներկիւղ:




ԿԷՏՆ

Է զօրաւոր և վիթխարի ՚ի մէջ ամենայն ձկանց ծովու. երկայնութի սորա է երբեմն ութ սունկամ հարիւր ոտնաչափ : Մման չորքոտանեաց արիւն սոցա առատ է և ջերմ, և վասն սաստիկ մեծութեան մարմնոյն կոչեցաւ սա լեխաթան կամ վիշապ ծովու : Են՝ ասէ Նարեկացին՝ լուղակք ՚ի ծովու ասադինք, գլխաւորին սաստկութեամբ լեխաթանն անուանեալ կիտիւ : Արտորդութիւն կետից զարմանալի է յոյժ, զորոյ զպատմութիւնն յետոյ ընթերցցիս ՚ի բնական պատմութեան : Արսան զսոսա մարդիկ վասն ճարպոյն և ոսկերացն՝ որք սպիտակ և ազնիւ են իբրև զփղոսկր, և ՚ի տուրեաւութենէ սոցա ստանան զշահ մեծ :



Ձ Ի Ն

Է կենդանի ինչ ազնիւ , և կարի յոյժ պիտանի
 մարդկան : Ստեղծաւ սա առ ՚ի բառնալ զմարդ
 ՚ի վերայ իւր , աշխոյժ է բնութեամբ , և արի
 ՚ի գործս մեծամեծս և դժուարինս : ՚Ի մէջ ա-
 մենայն ձիոց՝ առաւել գեղեցիկ և սրընթաց
 են ձիք Արաբիոյ , Անգղիոյ և Երկրին բարե-
 յուսոյ : Իսկ ձիք Թաթարաց և Աղուանից վաս-
 տակաւոր են յոյժ , որք երբեմն զաւուրս եր-
 կուս կամ երիս ընթանան անդադար՝ ոչ ինչ
 ուտելով կամ ըմպելով : Թաթարք և Ափրի-
 կեցիք ուտեն զմիս ձիոյ , որոյ և կաթն ոչ լինե-
 լով պարարտ յոյժ՝ օգտակար է հիւանդութեց :
 Ձիք կեան ընդ միմեանս սիրով և խաղաղութե-
 ապա ուրեմն դուք ևս՝ քաղցրիկ մանկունք իմ՝
 պարտիք սիրել զմիմեանս և կեալ խաղաղութիւն :



Փ Ի Ղ Ն

Ի միջի չորքոտանեաց է զօրաւոր և վիթխարի յոյժ : Պարանոց նորա է կարճ, այլ փոխանակ այնորիկ ունի զկնճիթ երկայն՝ զոր հասուցանէ ՚ի գետինն : Փիղք ծնանին ՚ի Հնդիկս, յԱփրիկէ և յայլ ջերմ գաւառս, իսկ ՚ի ցուրտ երկիրս սակաւածին են յոյժ և ոչ կարեն տուկալ ցրտոյ : Փիղն ողջախոհ է բնութեամբ, մաքրասէր և պարկեշտ յոյժ, գաղտ կատարէ սա զկարիս որովայնի և զայլ գործս բնութէ : Թէ և է սա գազան մեծ և յաղթանդամ, սակայն կամակար ծառայէ մարդոյ, որում և պիտանի է յոյժ յամենայնի : Հնազանդի սա և փոքրիկ մանկանց, քանզի սոքա ունին զհողի՛ այլ փիղն ոչ : Ոսկր ճակատու նր է ստուար յոյժ, և փղոսկրն է թանկագին և պիտանի նամ ուրեք :



ՈՒՂՏԻՆՁ

Է կենդանի ինչ Տլու, և յաճախ գտանի ՚ի կողմանս Ափրիկոյ: Գեղեցկաշոյն մասն մարմնոյ նորա է գլուխ նորին: Մորթ սորա խայտափիտ է իբրև զընձու, և ունի սա զպարանոց և զգլուխ ուղտու, վասն որոյ և կոչեցաւ ուղտինձ կամ

ընձուղտ : Չորիցս կամ Տիգրիցս բերին աստ
 զուղտինձս յԱփրիկոյ , այլ ոչ կարացեալ տոկալ
 օւջոյ երկրիս՝ զըաւեցան ՚ի կենաց :



Ա Յ Ծ Ն

Է կենդանի ինչ եղջերաւոր և յոյժ պիտանի
 մարդկան : Բարուք է սա զուարթ և խաղասէր :
 Սիրելի է սմա թափառիլ միայնակ ՚ի լեռինս և
 ՚ի գահավէժ տեղիս : Ունի սա զչորս ստամուքս,
 և ծնանի զուլն : Աթոն սորա համեղ է , թեթ և
 և օգտակար հիւանդաց , յորմէ և լինի պանիր
 ընտիր : Մորթ սորա առաւել պիտանի է քան
 զոչլսարին , և ՚ի մազից նորա կազմին ազնիւ
 ցփսիք : Այժք Քիշմիրայ և Թիպետայ են գե-
 ղեցկազոյն և երկայնահեր :



Յ Ա Կ Ո Ւ Ր Զ Ի :

Ահա՛ քեզ խաղ 'ի վերայ լարի կամ յակուրջւոյ :
Բարի մանուկն նախ պարտի ընթեռնուլ զդաս
իւր , ապա ունի հրաման խաղալոյ :

Ամենայնի ժամանակ է , ասէ ժողովողն , և
ժամ ամենայն իրաց 'ի ներքոյ երկնից : Ժամա-
նակ ծնանելոյ , և ժամանակ մեռանելոյ : Ժա-
մանակ լալոյ , և ժամանակ ծիծաղելոյ : Ժա-
մանակ կոծելոյ , և ժամանակ կաքաւելոյ : Ժա-
մանակ լռելոյ , և ժամանակ խօսելոյ : Ժամա-
նակ սիրելոյ , և ժամանակ ատելոյ :

Եւ ես քեզ ասեմ , ժամանակ ընթեռնելոյ
զգիրս , և ժամանակ խաղալոյ անվասա 'ի վերայ
յակուրջւոյ (+եղէո-է :)



ՃԱՐՏԱՐԱՌԻԹԻՒՆ ԱՅԾՈՒՒՆ :

Գովեմ զքեզ՝ մանուկ դու՝ զի սիրես զգիրս, բայց
 և գիտեմ զի բնութի քո սիրէ ևս զխաղա : Ասան
 որոյ և ես երբեմն թոյլ տաց քեզ խաղալ :
 Ահա՛ քեզ այր ոմն և այծ իւր, տէս՝ զլիարդ զչորս
 ոտս այծուն՝ կից ընդ միմեանս՝ դնէ նա ՚ի վե-
 րայ բոլորակ կոտորակի փայտի • յոր յաւելեալ
 զայլս մի ըստ միոջէ մինչև ցվեցերորդն՝ ճարտար
 այծն երևի քեզ ՚ի բարձրութեան անդ • և սեղ-
 մելով զդողդոջուն զոտս ընդ միմեանս՝ կայ ակ-
 նարկութեան տեառն իւրոյ Տաղանդ :

Այս խաղ այծու հասարակ է ՚ի Հնդիկս և
 ՚ի Պաղեստին • և ես մինչ էի քեզ նման մանուկ
 փոքրիկ՝ բազմիցս տեսի զայս խաղ : Բնութիւն ետ
 այծուց զպնդապահ և զդիւրամած ոտս՝ որով
 կարեն կանգուն կալ ՚ի սեպս Ալպեան լեռանց :



Օ Դ Ա Պ Ա Ր Ի Կ

Գունտն է ծնունդ մտաց գիտնականի ումեմն
Գաղղիացւոյ՝ Մանգուֆիէ կոչեցելոյ, որ յամի
1780 ՚ի վեր երևեցոյց զայս գունտ ՚ի Փարէզ:

Ծուխ և գիւրավառ ոգիք թեթև են քան
զօդ, և յորժամ շնուն զգունտն այսպիսեօք՝
ինքնին սկսանի նա ՚ի վեր բարձրանալ:

Օդապարիկն ՚ի սկզբանն երևեցաւ զարմա-
նալի իմն գիւտ յԵւրոպիա, բայց յետոյ ՚ի բա-
զում տեղիս կազմեալ զայսպիսի գունտս՝ այն-
քան բարձրացան ՚ի նոսա մարդիկ ՚ի վեր՝ մինչ
իսպառ աներևոյթ լինել յաչաց տեսողաց:

Եկն և յաւուրս մեր աստ ոմն Գաղղիացի, որ
օդապարիկ գնտով բարձրացաւ յամի 1836:



Ա Ն Ա Ն Ա Ս Ի Ծ Ա Ռ Ն

Յաճախ գտանի յԱրևելեան և յԱրևմտեան
Հնդիկս և ՚ի կողմանս Ափրիկոյ: Պտուղ սորա է
հոտաւէտ, քաղցր և ախորժահամ յոյժ:

Անանաս է յոյժ հազուադիւտ և թանկագին
յԱնգղիա, ուր արհեստն ընու զբնութե թե-
րին, քանզի տնկաբանք ՚ի ձեռն արհեստական
ըերմութեան բուսուցանեն զանանաս:

՚Ի Հայաստան ևս ոչ գտանի անանաս, քան-
զի ցուրտ և չոր է օդ երկրին՝ որ ոչ պատշաճի
աճման անանասի, այլ գոն անդ աղզի աղզի
պատուական պտուղք՝ որք աստ ոչ գտանին, և
որոց մեքս Տանտաղոսի նման կարօտիմք:



Վ. Ս. Կ. Ա. Լ. Կ. Ա. Թ. Ա. Ո. Ս.

է մայրաքաղաք մարդաշատ և թագուհի քաղաքացն Հնդկաստանի: Անկաւ սա ընդ ձեռամբ Անգղիացւոց յամի 1757: Գոն 'ի քաղաքիս անթիւ հոյակապ շինուածք, յորս շքեղագոյնն է պալատ փոխարքային մերոյ, վասն որոյ և կոչի սա քաղաք պալատաց:

Յընթացս անցեալ քսան և հինգ ամաց կառուցան աստ ազգի ազգի ձեմարանք և դպրոցք գիտութեց և արուեստից, յորոց միջի է և Հայկեան Մարդասիրական ձեմարանն՝ հաստատեալ 'ի 2 Ապրիլի, յամի 1821: Յայսմ աւուր արձակուրդ լինի համբակացն ամի ամի:

Գոն աստ և բազում եկեղեցիք, յորոց մին է Եկեղեցի մեր՝ շինեալ յամի 1724: 'Ի զանգակատանն գոյ ժամացոյց պատուական՝ զոր պարգևեաց ազգասէր և մեծագործ Խաչիկ Առաքելեան, որոյ յիշատակ լի է անմահութի:



ՍՈՒՐԲԵ ՂՄԶՄՐ

Է անուն մենաստանի Մխիթարեան միաբանութեան ՚ի Ալենետիկ : Հինեցաւ սա յամի 1740 , և ամ ըստ ամէ պայծառացաւ յոյժ :

Աստ լեզու Հայկական մշակեալ ծաղկեցաւ , և իբր զփիւնիկ ՚ի մոխրոյ վերակենցաղեաց : Աստ գոյ գրատուն ճոխ , վարժատուն և տպագրատուն : Աստ հարիւրաւոր մատեանք ՚ի լոյս ածան , որոց պսակ՝ նորատիպ բառարանն Հայկական : Աստ գրաւոր վաստակք նախնեաց մերոց երանելեաց՝ յամենաճախ ժանեաց ժամանակին զերծան : Աստ ծաղկեցուցանեն զարուեստս և զգիտուիս յօգուտ Հայ ազգին : Աստ բնակի իմաստուհին Աթենաս , և զՀայեցի մանկտին ՚ի Պալատիոմս իւր ճեմեցուցանէ : Աստ ՚ի վեր երևեցաւ մեզ երկրորդ Աթէնք՝ յառաջնոյն Աթենայ ոչինչ ընդհատ իմաստութեամբ :



Ա Թ Ե Ն Ե Ս

Է չաստուածուհի իմաստութեւն և արուեստից ըստ առասպելաց: Այլով անուամբ կոչի սա Պալլաս, և ՚ի մեզ՝ Նանէ: Ասի յառասպելս թէ յաւուր միում Դիոս ունէր զգլխացաւ սաստիկ, և գնացեալ առ Հեփեստոս՝ խնդրեաց ՚ի նմանէ հարկանել և ձեռքել զգլուխ իւր, և ահա անկաւ ՚ի ոնգաց նորա իմաստուհին Աթենաս՝ մկնդաւոր և տէգ ՚ի ձեռին:

Նուիրական էր սմա ձիթենի՝ նշան հաշտութեան, և բու՛ որ ՚ի մթան անդ ատեանէ, զիմաստութիւնն նշանակել կամելով: Ջտօն սորա կատարէին Հռովմայեցիք յամսեանն Մարտի, յորժամ աշակերտք տանէին զընծայս վարժապետաց իւրեանց:

Բան 'ի վր ժանտախտին էղէլոյ 'ի Բաղդատայ յամի 1831: *

Ժանտամահ՝ հոտոտի՝ յայս քաղաք ,
որ մեղաց՝ է պատիժ՝ երկնառաք .
արեալ են՝ զմկրատ՝ արդ Պարքայք՝
կենախուղք՝ զցերեկ՝ և զցայգ :

Մահացուք՝ ահաբեկ՝ սարսափին ,
աստ և անդ՝ յուսահատ՝ խուճապին ,
այլ 'ի զուր՝ զի թոյն է՝ օդ երկրին ,
որ նիւթէ՝ անխնայ՝ մահ նոցին :

Իբր զթուղ՝ 'ի ծառոց՝ թօթափին ,
եղկելի՝ բնակիչք՝ այս երկրին ,
և աշնան՝ տերեւոց՝ նմանին ,
դալկանան՝ թառամին՝ անկանին :

Ոգեցից՝ երկիւղիւ՝ զԴաւթին ,
յո՞ փախեայց՝ յերեսաց՝ Ստեղծչին .
թէ յերկինս՝ ելանեմ՝ անդ և նա ,
թէ երթամ՝ 'ի դժոխս՝ անդ մերձ նա :

Յայս ախտէ՝ զփախուստ՝ ոչ խնդրեմ ,
այլ տհիւ՝ կոչման Տեառն՝ սպասեմ .
զի անդարձ՝ է վճիռ՝ Արարչիս ,
հող էիր՝ և 'ի հող՝ դու դարձցիս :

* Գիտնական հեղինակ գործոյս հանգեալ 'ի Տէր ժանտախտիւ 'ի 23 Ապրիլի 1831, յաւուր տօնի յարուէ Ղազարու , քանի աւուրքք զկնի գրելոյ զայս ոտանաւոր . և մարմին նորա ամփոփեցաւ 'ի Տլգօշ եբրե տասն մղոնօք հեռի 'ի Բաղդատայ , ըստ գրելոյ Պարոն Խաչկին Մկրտչեան Շիրազեցւոյ՝ առն բարեբարոյի և ազգասիրի :

(Երկրորդ ծանօտ գործոյս յարս՝ գոն Բրիտանիական կրթութիւնս և սղօնք՝ Գրեյսօս ուրիշ 'ի սմանէ :)

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԱՎ. ԴԱԼԵԱՆՅ :

